ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ



Չիլինգարյան Անի Կարենի

Ծնվել է 09.10.1988թ. Երևան քաղաքում: 2005-2009թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատը: 2009-2011թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում: 2009-2011թթ. սովորել է Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով մագիստրոսի կոչում: 2014-2015թթ. սովորել է Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցում՝ քաղաքացիական (վարչական) մասնագիտացմամբ: 2012թ.-ից առ այսօր հանդիսանում է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ: 2011թ. փետրվարից առ այսօր աշխատում է Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ), «Իրավական մոտարկում եվրոպական չափանիշներին Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում՝ որպես իրավաբան: 2015թ. դեկտեմբերից առ այսօր հանդիսանում է ՀՀ փաստաբանների պալատի անդամ (վարչական գործերով), արտոնագիր թիվ 1992: 2014թ. փետրվար-հունիս ամիսներին հանդիսացել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, «Օրենսդրական գործընթացի գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի կարճաժամկետ փորձագետ: 2015թ. սեպտեմբերից առ այսօր Հայաստանի ամերիկյան համալսարանի իրավագիտության ֆակուլտետում դասավանդում է վարչական իրավունք, մագիստրոսական թեզերի ղեկավար է, հանդիսանում է ֆակուլտետի ընդունելության հանձնաժողովի անդամ: 2014թ. սեպտեմբերից առ այսօր աշխատում է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավունքի ամբիոնում՝ որպես վարչական դատավարության դասախոս: 2015-2017թթ. աշխատել է «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի իրավունքի ամբիոնում՝ որպես Իրավաբանական գիր և դատավարական հմտություններ առարկայի դասախոս: 2008թ. հունվար-հուլիս ամիսներին հանդիսացել է ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորի օգնական, պրակտիկանտ: 2006-2007թթ. հանդիսացել է ՀՀ տնտեսական դատարանում դատավորի օգնական, պրակտիկանտ: Մասնակցել է հետևյալ կոնֆերանսներին՝ Վարչական իրավունքի 9-րդ միջազգային կոնֆերանս,

Աստանա, Ղազախստան (2018, նոյեմբերի 1-3), Գերմանիայի վարչական դատարանի օրվան նվիրված 18-րդ կոնֆերանս, Համբուրգ, Գերմանիա (2016, հունիսի 1-3), Վարչական իրավունքի միջազգային ֆորում, Լայպցիգ, Գերմանիա (2016, հունիսի 20-24), Գերմանիայի վարչական դատարանի օրվան նվիրված 17-րդ կոնֆերանս, Մյունսթեր, Գերմանիա (2013, հունիսի 5-7), Ճանաչողական այց Գերմանիայի արդարադատության ակադեմիա և Եվրոպական իրավունքի ակադեմիա, Թրիր, Գերմանիա (2012, մայիսի 21-25): Ունի հետևյալ վկայականները՝ Վերապատրաստում փաստաբանների համար «Փաստաբանների պալատների գործունեությունը մամուլի և հասարակության հետ աշխատանքի բնագավառում» թեմայով, կազմակերպվել է Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի և ՀՀ փաստաբանների պալատի կողմից, (2018, դեկտեմբերի 13) մասնակցության վկայական, վերապատրաստում «Խորհրդատվության ոլորտում դերեր և կարողություններ» թեմայով, Բոննն, Գերմանիա (2018, նոյեմբեր 12-16) մասնակցության վկայական, Միջազգային խորհրդարանական համագործակցության ծրագիր Գերմանիայի Բունդեսթագում (մարտ, 2017) մասնակցության վկայական, Ինտերակտիվ դասավանդման մեթոդոլոգիաներ իրավունքի դասախոսների համար, Բորժոմի, Վրաստան (նոյեմբեր 30 - դեկտեմբեր 1, 2016) մասնակցության վկայական, Երևանի պետական համալսարան, «Իրավաբանական կլինիկական կրթություն», Կանանց մենթորական ծրագիր՝ կազմակերպված ԱՄՆ դեսպանատան և Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից (2009-2010թթ.): Հեղինակ է հետևյալ հրապարակումների՝ «Պարտավորեցման և ոչ ինքնուրույն վիճարկման հայցերի հարաբերակցությունը», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2018թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, 2019, հրատարակման փուլում է «Վարչական հայցերի դասակարգման հիմնախնդիրներ», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, 2015, էջեր 364-377, http://publications.ysu.am/wp-content/uploads/2015/06/364-377.pdf, «Օրենսդրական գործընթացի գնահատումը Հայաստանի Հանրապետությունում», ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, հոկտեմբեր, 2014 http://www.osce.org/odihr/126128?download=true, «ՍՊ ընկերությունների կառավարումը Հայաստանում», South Caucasus Law Journal, 03/2012, էջ 166. http://elrc.ysu.am/upload/186.pdf: Տիրապետում է երեք օտար լեզուների՝ ռուսերեն,

անգլերեն, գերմաներեն: Տիրապետում է համակարգչային հետևյալ ծրագրերի՝ Windows, Microsoft Office, ինչպես նաև տիրապետում է համակարգչային որոնողական համակարգերի: Ամուսնացած չէ:



Բոյաջյան Լուսինե Արտաշի

Ծնվել է 01.09.1984թ. ՀՀ Շիրակի մարզի Փանիկ գյուղում: 1991-2001թթ. սովորել է Շիրակի մարզի Փանիկ գյուղի միջնակարգ դպրոցում: 2001-2005թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը՝ ստանալով բակալավրի աստիճան: 2005-2007թթ. սովորել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայում և ստացել մագիստրոսի կոչում: 10.12.2007-06.08.2008թթ. աշխատել է Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ որպես դատավորի օգնական: 01.11.2010-21.02.2011թթ. աշխատել է «Ալիբի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում՝ որպես իրավաբան: 29.01.2013թ. ստացել է փաստաբանական գործունեության արտոնագիր /թիվ 1614/, որի գործողությունը կասեցված է: 22.02.2011թ.-ից առ այսօր աշխատում է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում՝ որպես դատավորի օգնական: Ամուսնացած է, ունի երկու երեխա:



Առաքելյան Սամվել Կնյազի

Ծնվել է 17.11.1981թ. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: 1998-2002թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և ստացել է իրավագիտության բակալավրի աստիճան: 2002-2004թթ. պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն է անցել ԱՀ զինված ուժերում: 2004-2006թթ. գերազանցությամբ սովորել և ավարտել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության բաժինը՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2006թ. սեպտեմբերից մինչև 2007թ. փետրվարը “XENOPHON” ծրագրի շրջանակներում որպես երիտասարդ գիտնական Հունաստանում մասնակցել է Հանրային իրավունքի եվրոպական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացների: 2010 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսներին սովորել է Թավթս համալսարամի Ֆլետչերի անվան Իրավունքի եւ Դիվանագիտության դպրոցում՝ մասնակցելով (ԱՄՆ, ՄԱ., Մեդֆորդ) Հանրային քաղաքականության և հանրային կառավարման ոլորտում վերապատրաստման դասընթացների ծրագրին (Թավիթյան հիմնադրամ): 2011-2014թթ. հանդիսացել է Հայ-Ռուսական Սլավոնական համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի հայցորդ և պատրաստել է ատենախոսություն «Սահմանադրական դատավարության առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով, որի պաշտպանության արդյունքում շնորհվել է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2005թ. կատարել է կամավոր աշխատանք Հանրային իրազեկման կենտրոնում: 2006-2007թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական բաժնում՝ որպես առաջատար մասնագետ: 2007-2016թթ. աշխատել է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական բաժնում՝ որպես գլխավոր մասնագետ: 2016թ. հոկտեմբերից առ այսօր զբաղեցնում է ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի իրավախորհրդատվական վարչության պետի պաշտոնը: 2011-2014թթ. դասավանդել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտում քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում, որոնց ընթացքում հանդես է եկել դասախոսություններով՝ «Սահմանադրական փոփոխություններ», «Պետական

կառավարման սահմանադրական հիմունքները», «Իրավական ակտերի մասին օրենք», «Վարչարարության հիմունքներ և վարչական վարույթ» և «Հակակոռուպցիոն ռազմավարություններ» առարկաների վերաբերյալ: Ութ գիտական հոդվածի հեղինակ է: Տիրապետում է երկու օտար լեզվի՝ ռուսերեն և անգլերեն: Տիրապետում է համակարգչային MS office package (Word, Power-point), Internet applications (information search in English, Armenian, Russian, e-mail, custom web-applications): Ամուսնացած է, ունի մեկ որդի և մեկ դուստր:



Հովհաննիսյան Սարգիս Մելսիկի

Ծնվել է 08.01.1989թ. Երևան քաղաքում: 2006թ. ավարտել է Երևանի Հակոբ Օշականի անվան թիվ 172 միջնակարգ դպրոցը: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունների միջև կնքված միջպետական պայմանագրի շրջանակներում 2006-2007թթ. սովորել է Մոսկվա քաղաքի Ռուսաստանի պետական սոցիալական համալսարանի (Российский государственный социальный университет) իրավագիտության ֆակուլտետում: Այնուհետև, 2007թ. տեղափոխվել և մինչև 2010 թվականը սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում՝ ստանալով իրավագիտության բակալավրի աստիճան: 2010-2012թթ. անցել է ժամկետային զինվորական ծառայության: Ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ԼՂՀ ՊԲ հրամանատար Մովսես Հակոբյանի կողմից բարեխիղճ ծառայության, ենթակաների ուսուցման և դաստիարակության գործում ունեցած հաջողությունների համար 2011թ. պարգևատրվել է պատվոգրով, իսկ ԼՂՀ ՊԲ Հադրութի զորամասի հրամանատարի 29.08.2011թ. հրամանով պարգևատրվել է «Քաջարի մարտիկ» մեդալով: Միաժամանակ, 2011-2012թթ. հանդիսացել է ԼՂՀ ՊԲ Հադրութի զորամասերի սերժանտական խորհրդի նախագահը: 2010-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում (հեռակա ուսուցմամբ)՝ ստանալով իրավագիտության մագիստրոսի աստիճան: 2013թ. հունվարի 17-ից մինչև հուլիսի 18-ը աշխատել է ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետության գույքային շահերի պաշտպանության և գանձումների սպասարկման բաժնում՝ որպես փորձագետ: 2013թ. սեպտեմբերի 13-ից մինչև 2018թ. նոյեմբերի 1-ը աշխատել է ՀՀ դատական դեպարտամենտ ՊԿՀ-ի կենտրոնական մարմնում: 2013թ. սեպտեմբերի 13-ից մինչև 2014թ. հունվարի 20-ը աշխատել է որպես Կազմակերպահիրավական վարչության կրտսեր մասնագետ, 2014թ. հունվարի 20-ից մինչև 2015թ. ապրիլի 9-ը՝ որպես Կազմակերպահիրավական վարչության մասնագետ, 2015թ. ապրիլի 9-ից մինչև հոկտեմբերի 5-ը՝ որպես Կազմակերպահիրավական վարչության ավագ մասնագետ, 2015թ. հոկտեմբերի 5-ից մինչև 2018թ. նոյեմբերի 1-ը՝ որպես Իրավական վերլուծության վարչության Իրավական վերլուծության և դատական հանձնարարությունների բաժնի ավագ մասնագետ:

Միաժամանակ, ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքները բարեխիղճ կատարելու համար 2017թ. դեկտեմբերի 28-ին շնորհվել է դատական ծառայության 1-ին դասի խորհրդականի դասային աստիճան: 2018թ. նոյեմբերի 1-ից մինչև 2019թ. մարտի 20-ը աշխատել է որպես Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի Դատավորների ընդհանուր ժողովի և դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովման վարչության Դատարանների աշխատակազմերի գործունեության ապահովմանն օժանդակող բաժնի պետ: Տիրապետում է հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներին: Ամուսնացած չէ:



Թադևոսյան Վազգեն Գրիգորի

Ծնվել է 20.04.1984թ. Երևան քաղաքում: 2001թ. ավարտել է Երևան քաղաքի թիվ 92 միջնակարգ դպրոցը: 2001թ. ընդունվել է Երևանի «Գլաձոր» կառավարման համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2002թ., ավարտել է ուսման 1-ին կուրսը և զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության: Ծառայել է ՀՀ ոստիկանության զորքերում: 2004թ. զորացրվել է զինվորական պարտադիր ծառայությունից և վերականգնել ուսումը «Գլաձոր» կառավարման համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսում: 2008թ. հունիսի 6-ին ավարտել է ուսումը և պետական քննական հանձնաժողովի կողմից շնորհվել է «իրավաբանի» որակավորում: 12.02.2008թ. աշխատանքի է անցել ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի դատական նիստերի քարտուղարի պաշտոնում՝ 6 ամիս փորձաշրջանով: 18.08.2008թ. շնորհվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան: 08.02.2010թ. նշանակվել է ՀՀ վարչական դատարանի դատավորի օգնականի պաշտոնում և միաժամանակ շնորհվել է ՀՀ դատական ծառայության առաջին դասի առաջատար ծառայողի դասային աստիճան: 2012թ. մասնակցել է ՀՀ փաստաբանների պալատի կողմից անցկացվող որակավորման քննություններին և 14.07.2012թ. ստացել է փաստաբանական գործունեության թիվ 1423 արտոնագիր, որը կասեցվել է իր դիմումի հիման վրա՝ վարչական դատարանում աշխատելու հետ կապված: 11.07.2013թ. իր դիմումի համաձայն ազատվել է ՀՀ վարչական դատարանի դատավորի օգնականի պաշտոնից: 2013թ. օգոստոս ամսից առ այսօր զբաղվում է փաստաբանական գործունեությամբ: Փաստաբանական գործունեության շրջանակներում 09.02.2015թ. պայմանագրային հիմունքներով աշխատել է ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունում՝ որպես իրավաբանական խմբի իրավախորհրդատու: 29.01.2016թ. իր նախաձեռնությամբ լուծվել է աշխատանքային պայմանագիրը: Ամուսնացած չէ:



Միքաելյան Վարազդատ Մերուժանի

Ծնվել է 19.02.1989թ. Երևան քաղաքում: 2006-2010թթ. սովորել և ավարտել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավագիտության բակալավրիատը: 2010-2012թթ. սովորել է Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի մագիստրատուրայում: 2013-2015թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում: Արևելյան Եվրոպայում և Հարավային Կովկասում ապաստանի համակարգերի որակի նախաձեռնության ծրագրի համաձայն՝ 2018թ. մարտի 12-ից մինչև ապրիլի 10-ը մասնակցել է Վիեննա քաղաքում կազմակերպված ՄԱԿ ՓԳՀ–ի (UNHCR) և Ավստրիական Կարմիր խաչի Ծագման երկրի մասին տեղեկատվության (ACCORD) համակցված դասընթացին և ստացել որակավորման վերաբերյալ վկայագիր: 2018թ. Երևան քաղաքում ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի (UNHCR) և ՀՀ միգրացիոն պետական ծառայության կողմից ստացել է վկայագիր՝ համատեղ կազմակերպված պրակտիկ և տեսական վերապատրաստման դասընթացին մասնակցելու վերաբերյալ: 01.03.2019թ. գարնանային հոսքի ընդունելության քննություն ընդունող հանձնաժողովի թիվ 2019-1/25 որոշմամբ ընդունվել է «ՀՀ Փաստաբանակ դպրոց» և մինչ օրս հանդիսանում է «ՀՀ Փաստաբանական դպրոց» հիմնադրամի ունկնդիր: 01.06.2013-31.01.2019թթ. աշխատել է ՀՀ վճռաբեկ դատարանում՝ որպես քաղաքացիական և վարչական պալատի դատավորի օգնական: 31.01.2019թ.-ից առ այսօր աշխատում է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավորի ավագ օգնական: 2014թ. ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի 25.12.2014թ. թիվ 1193-Ա հրամանով՝ որպես խրարուսանք շնորհվել է զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր՝ ՀՀ դատական ծառայության 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճան: 2015թ. ՀՀ դատական դեպարտամենտի ղեկավարի 28.12.2015թ. թիվ 1004-Ա հրամանով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների կայացման աշխատանքներին լավագույն մասնակցության, ինչպես նաև ծառայողական պարտականությունները և հատուկ առաջադրանքներն արդյունավետ և բարեխիղճ կատարելու համար պարգևատրվել է շնորհակալությամբ: Ամուսնացած է, ունի մեկ որդի: